ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» հուլիսի 2019 թվականի N:322-Ա ք.Գյումրի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N:319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հովհաննես Պետրոսյանի 2019 թվականի հուլիսի 11-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հովհաննես Պետրոսյանին 2019 թվականի հուլիսի 15-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 18 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի պաշտոնի նշանակումը:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝